Փախստականների ոդիսականը

Ս.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Պատմական ամեն մի ժամանակաշրջանում տեղի ունեցող իրադարձություններն իրենց կնիքն են դնում հասարակարգի վրա, ծնում լուծելի, դժվար լուծելի, նաեւ՝ անլուծելի խնդիրներ:

Վերջին տասնամյակում անլուծելի խնդիր է փախստականների խնդիրը: Երկու տասնյակից ավելի փախստականների հետ զրուցելը եւ ՀՀ կառավարությանն առընթեր միգրացիայի եւ փախստականների վարչությունում երկու ընդունելությանը մասնակցելը ակնբախ դարձրեց, որ խնդիրների մեծ մասը նույնն են, ինչ ողջ հանրապետությունում բնակարանի, զբաղվածության, գործազրկության, թոշակների ու նպաստների անթույլատրելի ուշացումների, բուժօգնության: Սակայն փախստականներին անհանգստացնում են նաեւ այլ հարցեր՝ քաղաքացիության, անձնագրերի, ինչպես նաեւ «ապօրինի» կոչումը իրենց վրայից թոթափելու հարցը:

Վարչության ընդունարանի պետը՝ պրն Մելիք –Փաշայանը, որը նույնպես փախստական է, տեղեկացնում է, որ սկզբում փախստականների թիվը եղել է 340 հազար. նրանցից 40 հազարը վերադարձել են Ղարաբաղ: Այսօր հանրապետությունից բացակայում է 60 հազարը, եւ հայտնի չէ, թե նրանք, Հայաստանի շատ քաղաքացիների նման, աշխարհի որ ծայրն են գնացել հանապազօրյա հաց հայթայթելու ոդիսականով:

... Բազմաթիվ փաստաթղթերով զինված, փախստականներն իրենց մտատանջությունները ներկայացրին պետի տեղակալին՝ Դավիթ Հակոբյանին: Աղվերանի 40 փախստական Չարենցավանում բնակարան են ստացել, Զրվեժի հանրակացարանների տեղում 50 բնակարան է կառուցվելու, 2000, 2001 թվականներին էլ բնակարաններ են կառուցվելու: Դրանով հնարավոր չէ 13 հազար 600 անօթեւան փախստականներին ապահովել բնակարանով:

Գործին լավատեղյակ եւ փախստականների խնդիրներով մտահոգ պրն Հակոբյանը ցուցադրեց մի պատկառելի ծրար, որտեղ զետեղված էին վարչության պետի Գագիկ Եգանյանի «կազմած, իր ձեռքով գրված ու խմբագրված» շատ առաջարկներ, այդ թվում նաեւ «88-92թթ. Ադրբեջանից բռնագաղթած եւ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերած անձանց սոցիալական երաշխիքի մասին» առաջարկը: Շատ չե՞ն, արդյոք, ուշացել:

Հանրապետության շատ բնագավառների նման, փախստականների ու բռնի տեղահանվածների հարցում էլ ժամանակին հստակ մշակված քաղաքականության բացակայության անառարկելի վկայություններից մեկն էլ այն է, որ այսօր, մեկ տասնամյակ անց, վիճակն ավելի ողբերգական է դարձել: Փախստականներից, բռնի տեղահանվածներից շատերն սկզբում ապաստանել են հարազատների, բարեկամների տներում: Հանրապետության սոցիալ-տնտեսական վատթարացող վիճակի ու սկիզբ առնող արտագաղթի հետեւանքով բարեկամն ու հարազատը վաճառել են տներն ու լքել Հայաստանը, եւ փախստականները, մնալով անօթեւան, գիշեր-ցերեկ մաշում են վարչության դռները, օթեւան պահանջում մեկ տասնամյակից ավելի կրելով «ապօրինի» պիտակը: Շատերի հետ ենք զրուցել, բայց չենք հանդիպել հստակ քաղաքականության շնորհիվ նորմալ բնակարանով ապահովված փախստականների՝ ոչ Տերյան փողոցի մի քանի համարներում, ոչ Լամպերի գործարանի պրոֆիլակտորիայում, ոչ Երքիմշինի հանրակացարանում:

Երեւանի ճարտարագիտական համալսարանի Տերյան փողոցում գտնվող ուսումնական մասնաշենքը «ապօրինի» մտել ու տասը տարուց ավելի ապրում է մոտ մեկ տասնյակ ընտանիք: Շենքը վթարային էր, ավերակ, խարխուլ: Համալսարանը պատրաստվում էր վերանորոգել, քանի որ այն անհրաժեշտ է ուսումնական աշխատանքների նորմալ գործընթացի համար: Սակայն... Չկա լույս, ջուր, կոյուղի, աղբահանություն չի կատարվում: Լյուբա Ենգիբարյանն ամբողջ ժամանակ ողբում է. որդեգրած երեխան ծանր վիրահատություն է տարել. Քրիստինան բուժման կարիք ունի, նորմալ, մարդկային պայմաններ են պետք: Կորցրել է հույսը, հավատը.

- Թե կարըմ էք, մին պյանով օքնեք,- ասում է Լյուբան: - Գրածնիդ հո՞ւմ ա պետքը, հո՞վա պանի տեղ դնըմ,- արցունքի միջից մրմնջում է նա:

Հույսի վերջին հյուլեն կորցրել են նույն տեղում «ապօրինի» բնակվող զոհվածի այրի Ռ. Ղահրամանյանը եւ Հ. Մեժլումյանը: Վերջինս գրագետ ու կիրթ է, հանրապետությունում լույս տեսնող թերթերին տեղյակ ու մի կողմ թողնելով իր ծանրագույն վիճակը բողոքում է, որ ռադիո չունեն, խնդրում է «ռադիո անցկացնել»: Այդ մասին ակնարկում եմ վարչությունում:

- Իսկի մեր վարչության շենքում ռադիո չկա,- ասում է պատասխանատու անձանցից մեկը: Ռադիո քաշելու համար միջոցներ են պետք. որտեղի՞ց, մի քոռ կոպեկ էլ չունենք:

Փախստականները «սեւ տուն» անունն են տվել իրենց բնակեցրած Տերյան փ. թիվ 107-ի շենքին: Շենքի դիմաց, նրան կից նոր շենք է կառուցվում, որը խանգարում է, որ արեւ թափանցի: «Սեւ շենքը» զուրկ է բնակեցման համար անհրաժեշտ պայմաններից:

Փախստականների եւ բռնագաղթածների հետ առնչվելիս աչքիցս չվրիպեց վարչության պետի տեղակալի Դավիթ Հակոբյանի առանձնասենյակում, գրասեղանին, զանազան պաշտոնական թղթերի հետ դրված, փայլուն թղթի վրա, գունավոր, ռուսերենով տպագրված «Возвращение в Арцах» կոչ-հորդորը, որից մեկական օրինակ տրվում էր այցելուներին: Հորդոր-կոչում ամենայն մանրամասնությամբ, գեղարվեստական լեզվով նկարագրվում էին Արցախի գեղատեսիլ բնությունը, կլիմայական բացառիկ պայմանները, թավ անտառները, բարեբեր հողը, բնական հարստությունները, անասնապահությամբ զբաղվելու բացառիկ հնարավորությունները: Թերեւս պետք էր կոչում նշել փախստականների անուն-ազգանուններ, որոնք վերադարձել են Արցախ եւ լուծել իրենց հուզող խնդիրների գոնե մի մասը: